# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2020 թվականի N 1041

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1-6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆՈՆՆԱ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՀԵՍՏԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԾԱԾԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոննա Գագիկի Հովսեփյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 16032018-06-0047 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրված տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 17-րդ կետերով, 18-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի թիվ 1-6/1 հասցեում գտնվող Նոննա Գագիկի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող պահեստի զբաղեցրած 0.85526հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Ճանաչել օրինական Նոննա Գագիկի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի թիվ 1-6/1 հասցեում գտնվող 0.85526հա մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 118.84քմ մակերեսով ծածկը:
3. Նոննա Գագիկի Հովսեփյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը 118.84քմ մակերեսով ծածկի համար 303050 (երեք հարյուր երեք հազար հիսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 1-6/1 պահեստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2020 թվականի N 1042

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածին համապատասխան, Վանաձոր համայնքի 2021 թվականի բյուջետային գործընթացը սկսելու և բյուջեի նախագիծը կազմելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. **Համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին՝**
   Մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 01-ը համայնքապետարանի ֆինանսական բաժին ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հայտերը և պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:
2. **Աշխատակազմի բաժինների պետերին՝**
   ա) Սույն որոշման 1-ին կետում նշված ժամկետներում ֆինանսական բաժին ներկայացնել համապատասխան ոլորտներում սպասվելիք եկամուտների, ինչպես նաև համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված լիազորությունների ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի և գնման հայտերի նախագծերը, գնվելիք աշխատանքների, ծառայությունների և ապրանքների գծով ծախսերի նախահաշիվները ըստ բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման համապատասխան ձևերի, ծախսերը հիմնավորող նախագիծ նախահաշիվներով:
   բ) Մինչև ընթացիկ տարվա հուլիսի 15-ը համայնքապետարանի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին ներկայացնել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու համար առաջարկվող ծրագրերը:
   գ)Համապատասխան ոլորտներում ապահովել սույն որոշման առաջին կետի կատարումը:
3. **Աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետին՝**
   Մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 01-ը ամփոփել և համայնքի ղեկավարին ներկայացնել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումների (սուբվենցիաների) բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագիծը:
4. **Աշխատակազմի ֆինանսական, զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինների պետերին՝**
   Մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 20-ը ամփոփել սահմանված ձևերով ներկայացված փաստաթղթերը, կազմել Վանաձոր համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագիծը և ներկայացնել համայնքի ղեկավարին:
5. **Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Ա. Գրիգորյանին:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2020 թվականի N 1043

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2020 թվականի N 1044-Ն

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 167-Ն որոշման 8-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել 8 800 000 (ութ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամի փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի բյուջեի տողերը համարել փոփոխված՝ սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխությանը համապատասխան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1045

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/3-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Կարապետի Գրիգորյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04052020-06-0047 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 3/3-1/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 6.09քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 4.68քմ) սանհանգույցը 20710 (քսան հազար յոթ հարյուր տասը) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 298.1քմ մակերեսով հողամասը 570570 (հինգ հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արտակ Կարապետի Գրիգորյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արտակ Կարապետի Գրիգորյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել սանհանգույցի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1046

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ - 1 ՆՐԲԱՆՑՔ, 8-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՀՈՒԼԻՍԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 782-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մեխակ Աղվանի Պետրոսյանի դիմումը, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29012013-06-0260 վկայականը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց-1 նրբանցք, 8-1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 24.0քմ մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 24.0քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝23.12քմ, որից 16.70քմ՝ ավտոտնակ, 6.42քմ՝ ծածկ) մետաղական ավտոտնակի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մետաղական ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, 1-ին նրբանցք, թիվ 8-1 ավտոտնակ:
6. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 23 հուլիսի 2013 թվականի «Մեխակ Պետրոսյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 782-Ա որոշումը՝ 06.08.2013թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին (մրցույթով) թիվ 213 պայմանագիրը համարելով լուծված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1047

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 9 ՇԵՆՔ, 37 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Կոլյայի Ադամյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 14102019-06-0025 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Վ.Համբարձումյան փողոցի 9 շենքի 37 բնակարանի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ խանութ:

2.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքը հանել բնակարանային ֆոնդից:

3.Բնակարանի գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Վ. Համբարձումյան փողոց, 9 շենք, թիվ 37 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1048

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵԴՐԱԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Սեդրակի Մելքումյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07052020-06-0022 և Սուսաննա Սեդրակի Մելքումյանի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1979860 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Հյուսիսային փողոցի թիվ 2/1-1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 744.8քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07052020-06-0022 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 1425550 (մեկ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սուսաննա Սեդրակի Մելքումյանին՝ արտադրական տարածքի ընդլայնման նպատակով:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սուսաննա Մելքումյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 744.8քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1049

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 122 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԻԴԱ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աիդա Վաղարշակի Օհանյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01082012-06-0125 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 122 հասցեում գտնվող Աիդա Վաղարշակի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 122-1/7 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1050

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 723 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեորգի Էդուարդի Դանիելյանի լիազորված անձ Լևոն Ռաֆիկի Աղաբաբյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 19 մարտի 2020 թվականի թիվ 723 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 06.04.2020թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-06042020-06-0013 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 19 մարտի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոցի թիվ 66/1 հասցեի հարավային մասում գտնվող բնակելի տան, շինությունների ու հողամասի նկատմամբ Գեորգի Էդուարդի Դանիելյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամաս օտարելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 723 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) Որոշման վերնագիրը «ճանաչելու,» բառերից հետո լրացնել «հողամասի գործառնական նշանակությունը փոխելու,» բառերով:

2) Որոշման նախաբանը «օրենսգրքի» բառից հետո լրացնել «3-րդ հոդվածի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով,» բառերով:

3) Որոշման 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.
«3. Փոխել Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոցի թիվ 66/1 հասցեի հարավային մասում գտնվող 0.06024հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի»:

4) Որոշման 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը կարդալ որպես 4-րդ, 5-րդ և 6-րդ կետեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1051

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 719 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքի ղեկավարի 19 մարտի 2020 թվականի թիվ 719 որոշումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 19 մարտի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-4, Մեքենաշինարարների թաղամաս թիվ 41Ա հասցեի արևմտյան մասում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 719 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետում «41/1-8/1» թվերը փոխարինել «41/1-8/2» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1052

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-4 ԹԻՎ 27/11-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրիգոր Մարտունի Հակոբյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19032019-06-0025 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4 թիվ 27/11-1 հասցեում գտնվող Գրիգոր Մարտունի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4 թիվ 27/11-1 հասցեում գտնվող տարանջատված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.

ա) 0.00292հա մակերեսով հողամասի և 24.47քմ մակերեսով ավտոտնակի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4, թիվ 9/5-1 ավտոտնակ (հատակագիծ թիվ 1).

բ) 0.00566հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4, թիվ 27/11-1 հողամաս (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1053

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԱՎԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՔՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զավեն Ռազմիկի Քոսյանի (ծնված՝ 11.06.1957թ.) դիմումը, անհատական բնակելի տան 15.03.1988թ. տեխնիկական անձնագիրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1894194 վկայականը, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոցի թիվ 29 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 63.0քմ և կից 1.55քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1940-1988թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 129.1քմ, որը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Զավեն Ռազմիկի Քոսյանին և կից տնատիրությանը: Զավեն Ռազմիկի Քոսյանի բաժնեմասը կազմում է 64.55քմ (129.1:2):
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Զավեն Ռազմիկի Քոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոցի թիվ 29 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 63.0քմ մակերեսով հողամասին կից 1.55քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
129.1քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Զավեն Ռազմիկի Քոսյանին և կից տնատիրությանը: Զավեն Ռազմիկի Քոսյանի բաժնեմասը կազմում է 64.55քմ (129.1:2):
2. Ճանաչել Զավեն Ռազմիկի Քոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոցի թիվ 29 հասցեի 64.55քմ (63.0+1.55) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոցի թիվ 29 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Մ. Հերացու փողոց, թիվ 29/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1054

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 697 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչիկ Հովհաննեսի Համբարյանի դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 06/04/2020թ. թիվ Կ-06042020-06-0003 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 17 մարտի 2020 թվականի թիվ 697 որոշումը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված նոր տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 17 մարտի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Տավրոսի (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող Խաչիկ Հովհաննեսի Համբարյանին հատկացված հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 697 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետում «921.5» թիվը փոխարինել «500.0» թվով:

2. Վանաձոր համայնքի ղեկավարի 17 մարտի 2020 թվականի թիվ 697 որոշման հատակագիծը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020 թվականի N 1055

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2020 թվականի N 1056

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Գումարել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստ 2020 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 11:00-ին, համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում հետևյալ օրակարգով.

1.Վանաձոր համայնքի ավագանու 2020թ. մայիսի 27-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23–ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. *Վ. Գրիգորյան*

3.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 149 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. *Վ. Գրիգորյան*

4. Արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով մեկ անձից գնումների կատարման գործընթացին համաձայնություն տալու մասին

զեկ. *Դ.Խաչատրյան*

5.Բաբկեն Մխիթարյանի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ. *Վ.Դավիթավյան*

*6.*Վանաձոր համայնքի ավագանու 12 մարտի 2020 թվականի թիվ 28 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. *Ս. Աբովյան*

*7.*Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. *Ս. Աբովյան*

8. Վանաձորի քաղաքային համայնքի ավագանու 14 մայիսի 2013 թվականի թիվ 34-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. *Ս. Աբովյան*

*9.* Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2020 թվականի N 1057

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2020 թվականի N 1058

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1018 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սերյոժայի Ոփյանի լիազորված անձ Կարեն Գարիկի Քալաշյանի դիմումը, 30.04.2019թ. լիազորագիրը, Վանաձորի համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 12-ի թիվ 1018 որոշումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձորի համայնքի ղեկավարի 12 մայիսի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 58/12-1 և թիվ 58/12-1/1 հասցեներում գտնվող Արմեն Սերյոժայի Ոփյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը և շինությունները որպես մեկ գույքային միավոր միավորելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1018 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման նախաբանում «28032019-06-0036» թվերը փոխարինել «05022020-06-0046» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2020 թվականի N 1059

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ԳՈՇԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/6-6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԱՎԻԹ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՏԻՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Գառնիկի Ավետիքյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052020-06-0049 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի բ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Մ.Գոշի փողոցի թիվ 1/6-6 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 36.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 34.08քմ) խանութը 861120 (ութ հարյուր վաթսունմեկ հազար հարյուր քսան) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 43.3քմ մակերեսով հողամասը 195890 (հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր իննսուն) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Դավիթ Գառնիկի Ավետիքյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Դավիթ Ավետիքյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել խանութի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 20
ք.Վանաձոր